 - դ. Մեղուաբուծութիւնից—մեղր և մոմ. (քանակ. և գինը):
 - ե. Շերամապահութիւնից—բոժոժ կամ մետաքս. (քանակութիւնը և գինը):
 - զ. Կապալով տուած հողի տարածութիւնը և նրանից ստացուած եկամուտը:
 - է. Զուտ արդիւնք անայնազործութիւնից և տեղական արհեստներից:
 - ը. Օտարութեան մէջ աշխատած փողը:
- 24. Ծախս.
 - ա. Երկրագործական ծախսեր, սերմ. (քանակ. և գինը). կապալի վճարը, մշակների վարձը և նրանց կերակրելու ծախսը:
 - բ. Ծախսեր անասնապահութեան և թռչնապահութեան վերայ. (խոտ, յարդ, գարի, գոմի և ուրիշ շէնքերի, տաւարածի, հովուի վրայ) ծախսը տարեկան:
 - գ. Երկրագործական և այլ գործիքների վրայ եղած տարեկան ծախսը:
 - դ. Մնուէրի և այլ պէտքերի ծախսը.—ցորեն, գարի, կորեկ, կաթ, պանիր, իւղ, ճարպ, միս, մրգեր, բանջարեղէն, ձու, թռչուն, գինի, օղի, շաքար, թէյ, աղ. (քանակ. և արժէքը):
 - ե. Հագուստի, ոտնամանի ծախսեր—տղամարդու, կնոջ և երեխայի. մանրամասն, միասմի գրել և նշանակել թէ իւրաքանչիւր կտորը ի՞նչ արժէ և քանի՞ տարի է դիմանում:
 - զ. Լուսաւորութեան վրայ—նաւթ, ճրագ և լուցկի:
 - է. Վառելիքի վրայ—փայտ, աթար:

- ը. Տան վերանորոգութեան ծախս:
- թ. Հարկերի համար—պետական, հասարակական, հողերահանութեան, ուսման վարձ, գրքերի և այլ պիտոյքների ծախս:
- ժ. Զանազան ծախսեր.—սապոն, ծխախոտ և այլն.
- ժա. Կահ կարասիքի և ամանների վրայ ծախս.—

Գ. ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.

- 24. Ի՞նչ տեսակ են ճանապարհները, կան արդեօք կառքի ճանապարհներ և ինչո՞վ են գիւղացիք իրենց բեռները տեղափոխում:
- 25. Նրանց ուղղութիւնը, տարածութիւնը:
- 26. Ո՞րչափ ժամանակ են կորցնում քաղաք կամ մօտակայ շուկան գնալու համար. մի ժամում բեռնաւորուած ձին, սայլը քանի վերստ են գնում:
- 27. Ճանապարհները բարեկարգուած են արդեօք և ո՞վ է բարեկարգողը—գիւղացիք թէ կաւավարութիւնը:

III ԱԶԳԱՐՆԱԿՈՒԹԵԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

- 29. Ազգաբնակչութեան ընդհանուր խարակտերիստիկան (բնաւորութիւնը), մտաւոր ընդունակութիւնը.—ձեռներեցութեան ընդունակութիւնը և եռանդը, կամ անտարբերութիւնը և ծուլութիւնը—խաղաղ կամ աւազակարարոյ լինելը.—հետաքրքրութիւնը, կրօնասիրութիւնը.—վերաբերմունքը և հայեացքը դէպի կինը. միաբանութիւնը և անմիաբանութիւնը հասարակութեան մէջ.—մաքրասիրութիւնը և անմաքրասիրութիւնը.—բնակիչների վերաբերմունքը դէպի ուրիշի սեփականութիւնը.—ճշտապահութիւնը և տուած խօսքի կատարումը կամ չը. կատարելը.—նրանց վերաբերմունքը դէպի իրենց և ուրիշների կեանքը:
- 30. ա. Գրագիտութիւնը և ուսումնարան.—աշակերտների թիւը.—քանի՞ գրագէտ կայ գիւղում: Քանի՞սը գիտեն մայրենի լեզուն և քանի՞սը պիտական և օտար լեզուներ:
 - բ. Գիւղում քանի՞սը միջնակարգ և բարձրագոյն դպրոցներ աւարտել են և քանի՞սը այժմ սովորում են:
 - գ. Քանի՞ անհատներ գիւղից վարում են գանազան քաղաքներում ինտելիգենտ պաշտօններ. թուել իւրաքանչիւրը առանձին:
- 31. Գինետուններ.—քանի՞ գինետուն կայ, նրա ազդեցութիւնը բարքերի վրայ.—ի՞նչպէս է վերաբերում ազգաբնակչութիւնը դէպի գինետունները:



բ. Ո՞րքան ժամանակ է հարկաւոր որոշ քանակութեան հում նիւթի մշակութեան համար, օր. մի պուզ բուրդ լուսնալու, զը-
գելու, մանելու և ներկելու համար:

գ. Ո՞վ է պարապում այդ գործով:

դ. Քանի՞ հոգի պարապում են այդ գործով, եթէ նրանց թիւը շատ է, արդեօք այդ դէպքում գործադրում են աշխատանքի բա-
ժանումը:

ե. Տնայնագործ-ընտանիքները միմիայն իրենց արհեստով են պարապում, թէ ուրիշ տնային գործերով և վերջինը սրբան ժամանակ է խլում նրանցից:

Քանի՞ աշ- խատաւոր	Գործուած- քի անունը	Չափը	Աշխատանքը ընդհատելով			Առանց ընդհատելու		
			Քանակու- թիւնը	Ո՞րքան ժամա- նակի ընթացք	Ո՞րքան հում նիւթ է գնում	Քանակու- թիւնը	Ո՞րքան ժամա- նակի ընթացք	Ո՞րքան հում նիւթ է գնում

- զ. Օրական քանի ժամ են պարապում արհեստով և քանի ժամ ուրիշ գործերով:
- է. Տարուայ սր մասը աշխատում են, տարուայ մէջ քանի՞ օր տօն են պահում, և բացի տօներից ի՞նչ օրեր չեն աշխատում ու ի՞նչ պատճառով:
- ը. Մի աշխատաւորի տարեկան արդիւնաբերութեան չափը:
- թ. Գիւղի բոլոր աշխատողների արդիւնագործած իրերի քա-
նակութիւնը.—նշանակել սր տեսակից որքան և ի՞նչ արժէ իւրա-
քանչիւր տեսակը:
- ժ. Ամենատարածուած օրինակները, չափը և մշակութեան

ձևերը, որոնցով առաջնորդում են տնայնագործները. սրտեղից են նրանք մուտք գործել և սր ժամանակից:

ժա. Չե՞ն նկատում արդեօք վերջին ժամանակներում նորմու-
ծութիւններ ձևերի, օրինակների, ներկերի և մշակութեան եղա-
նակի մէջ, նոյնպէս նկատելի չէ՞ փոփոխութիւն հում նիւթերի
մէջ. սրտեղից և սում ազդեցութեամբ է լինում այդ, ու ինչո՞վ
կարելի է բացատրել. գիւղացիք սր օրինակներն են գերադա-
սում.—նկարագրել ի՞նչ և նոր ներկերի գործածութիւնը մանրա-
մասն կերպով և թէ ո՞վ է պարապում դրանով:

ժբ. Գիւղում ո՞վ է համարում ամենալաւ վարպետ և ո՞ւմ են
առհասարակ լաւ վարպետ համարում:

43. Վաճառումը.

ա. Բնակիչների տարուայ ընթացքում վաճառած իրերի թի-
ւը, սր տեսակից և սր գնանոցից:

բ. Իրերի սովորական և այժմեան գինը:

գ. Ո՞րտեղ են ծախում և ո՞ւմ.—վաճառականներին, պատուէր
տուողներին, թէ անձամբ տանում են բազար կամ քաղաք.—վրձ
են առնում թէ ապրանք:

դ. Ո՞րքան են վաստակում տնայնագործները, և սրբան միջ-
նորդ վաճառականները:

ե. Վաճառելու սր եղանակը տնայնագործների կարծիքով
ձեռնառու է իրենց համար:

զ. Վաճառելու ժամանակ սր ձևը և տեսակը գերադասում
են և ի՞նչ պակասութիւնների վրայ ուշադրութիւն են դարձնում,
և առհասարակ տեղացիների կարծիքով ապրանքի լաւութիւնը և
վատութիւնը ինչի՞ց կախում ունի:

44 Գումար.

ա. Առնուազն ի՞նչ գումար հարկաւոր է որոշ խոհականու-
թեամբ իրեր արդիւնագործելու համար:

բ. Ո՞րքան ժամանակուայ ընթացքում գումարը կատարում է
իւր շրջանը:

գ. Գումարը սեպհակմն է, թէ փոխ է առնում. (ինչ % -ով
պայմաններով):

45. Վարձու աշխատաւորներ.

ա. Կան արդեօք գիւղի մէջ օրավարձով բանող արհեստա-
ւորներ և նրանց թիւը քանի՞ է:

բ. Քանի՞ ընտանիք վարձում է նրանց և ինչո՞ւ (ընտանի-
քում աշխատաւոր ձեռքերի պակասութեան պատճառով, թէ տես-
ցիք իրենք չեն ուզում պարապել դրանով):

գ. Ո՞րտեղացի են նրանք, համագիւղացի՞ թէ ուրիշ գիւղե-
րից.—նրանց միջին հասակը և սեռը:

դ. Ի՞նչ գործ է նրանց յանձնուում կատարելու, քանի՞ ժամա-
նակուայ ընթացքում, որի դործիքներով, իրենց թէ տիրոջ, և
առհասարակ տարեկան քանի՞ օր այդ աշխատաւորները վարձով
գործ են անում:

ե. Օրը քանի՞ ժամ են աշխատում.—ի՞նչ են ստանում օրա-
վարձ, ամսական կամ իւրաքանչիւր կտորից և հացը սնման:

զ. Վարձը փողով են ստանում, թէ իրեղէնով:

Ի՞նչ են ուտում, քանի՞ անգամ և որքան ժամանակ են տա-
լիս նախաճաշի, ճաշի և ընթրիքի համար. և որտեղ են ապրում:

է. Մանրամասն նկարագրել թէ ի՞նչպէս են վերաբերում
նրանց առհասարակ գիւղացիք և մասնաւորապէս նրանց վարձող-
ները, աշխատաւորը նրանց ընտանիքի հետ է ճաշում, թէ ա-
ռանձին:

ը. Քանի՞ արհեստաւորներ գործ վերցնում են տանը կատա-
րելու համար:

46. Աշակերտներ.—

ա. Ո՞րտեղ են սովորում—իրենց տանը, թէ ազգականների
և հարեանների մօտ.—Սովորութիւն կա՞յ արդեօք օտարների մօտ
սովորելու և ի՞նչ պայմաններով կատարւում է այդ:

բ. Ո՞ր հասակից են սկսում սովորել և ի՞նչ սեռից են լի-
նում աշակերտները:

գ. Առաջ արհեստի սր մասն են սովորեցնում, օր. գորգա-
գործութեան մէջ բուրդ լուանալը, գգելը, գործելը, հինելը, մա-
նելը և ներկելը սր հասակներումն են սովորեցնում. սովորաբար
աշխատանքի սր մասն են նրանց յանձնում կատարելու:

դ. Ո՞րքան ժամանակուայ ընթացքում իւրացնում են արհես-
տի բոլոր ճիւղերը և ե՞րբ նրանք աշակերտութիւնից դուրս են
գալիս և դառնում են արհեստաւոր, այսինքն ինքնուրոյն սկսում
են աշխատել:

ե. Աշակերտների աշխատութիւնը՝ համեմատելով հասակա-
ւորների աշխատութեան հետ՝ տալիս է արդեօք հաւասար օգուտ,
թէ պակաս է լինում (որքան):

զ. Նրանց դրութիւնը օտարների մօտ աշխատելիս.— պատա-
հում են հարստահարութեան զէպրեր և ի չարն գործ չեն զնում
իբրաւունքը աշակերտների վրայ նրանց վարպետները. — Լինում են
աշակերտներ՝ որոնք թողնում փախչում են տուն:

47. Արհեստի ազդեցութիւնը.—

ա. Ի՞նչ ազդեցութիւն ունի արհեստը աշխատաւորների ա-

ուղջութեան վրայ.— Ի՞նչ հիւանդութիւններ տարածուած են առ-
հասարակ գիւղացւոց մէջ և ի՞նչ հիւանդութիւններ են առաջա-
նում այդ արհեստից:

բ. Բարոյական տեսակէտից ի՞նչ ազդեցութիւն ունի այդ
արհեստը: Ի՞նչպէս են վերաբերում գիւղացիք զէպի արհեստնե-
րը առհասարակ և մասնաւորապէս ուսումնասիրութեան առարկայ
դարձած արհեստները: Ի՞նչ գիրք ունեն հասարակութեան մէջ
հմուտ արհեստաւորները. օր. լաւ գորգ գործող աղջիկը համար-
ւում է արդեօք լաւ հարսնացու և ի՞նչպէս են նայում նրա վրա
իւր ընկերուհիները և հասարակութիւնը:

գ. Կազմում են արդօք արդիւնաբերող ընկերութիւններ.—
Ո՞ւնին արդեօք գաղափար դրա մասին և ի՞նչպէս են վերաբեր-
ւում:

դ. Ուսումնասիրողի կարծիքով դա որքան իրագործելի է:

48. ա. Ի՞նչպէս են նայում տնայնագործները իրենց գործի
ներկայի վրայ և ի՞նչ ապագայ են սպասում նրանից:

բ. Չարգանում է արդեօք նա հում նիւթերի լաւութեան,
մշակութեան տեխնիկայի և ապրանքի պահանջի տեսակէտից.—
Եթէ այդ փոփոխութիւնները տեղի են ունենում, ինչով են բա-
ցատրում գիւղացիք, և ինչով է բացատրում ուսումնասիրողը
(այդ երկու կարծիքները առանձին առանձին գրել):

գ. Ի՞նչ պէտք է անել արհեստը ընկած դրութիւնից բարձ-
րացնելու համար. (Ուսումնասիրողի և նրանց կարծիքը):

դ. Ի՞նչպէս են վերաբերում նրանք առհասարակ զէպի ա-
մեն մի նրամուծութիւն, զէպի նոր մէքենաներն առհասարակ և
մասնաւորապէս իրենց արհեստի վերաբերմամբ:

49. Ի՞նչ ազդեցութիւն ունի տեղական արդիւնագործու-
թեան վրայ գործարանական արդիւնաբերութիւնը:

ա. Ի՞նչ տեսակ և քանի գործարաններ կան և ի՞նչ հեռաւո-
րութեան վրայ են գտնուում գիւղից:

բ. Հիմնարկողը տեղացի՞ է, թէ օտար և սր ժամանակ է
հիմնարկել:

գ. Ի՞նչ ազդեցութիւն է ունենում նա ուղղակի և անուղղա-
կի կերպով գիւղացիների վրայ ընդհանրապէս և տնայնագործ-
ների վրայ մասնաւորապէս (խլելով նրանցից աշխատաւոր ձեռ-
քերը):

Գիւղից քանի՞ մարդ է աշխատում այդ գործարաններում:

ԾՐԱԳՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Իւրաքանչիւր անձնաւորութիւն, որ ցանկանում է օգտուել այս ծրագրից և ուսումնասիրութիւններ կատարել, այնպէս որ հարկաւոր ղէպքում և կարողանայ տպել, պարտաւոր է նախ և առաջ այս ծրագիրը մանրամասն ուսումնասիրել և մութ կէտերը պարզել:

Գուցէ շատերին միանգամից շատ հեշտ թւայ բոլոր կէտերին պատասխանելը, բայց փորձը հակառակը ցոյց կը տայ. և ով լաւ ուսումնասիրել և պարզել է ծրագրի ամեն մի կէտը, նա հեշտութեամբ կը յաղթէ զժողովութիւններին: Ծրագրովս օգտուել ցանկացողների գործը հեշտացնելու համար մենք ծրագրի գրեթէ իւրաքանչիւր կէտի մասին հարկաւոր բացատրութիւնները դնում ենք այստեղ:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, ներկայ ծրագիրը չորս գլուխաւոր մասերից է բաղկացած.—

Առաջին մասի նպատակն է ուսումնասիրել հետազօտութեան վայրը, և ծանօթանալ տեղական բնակիչների հետ: Եւ իսկապէս ինչպէս կարելի է ուսումնասիրել մի գիւղի այս կամ այն երևոյթը և եզրակացութիւններ անել, եթէ մեզ լաւ ծանօթ չէ, թէ այդ գիւղը ինչ պայմաններում է ապրում, ինչ դիրք, կլիմայ, տեղազրական առանձնայատկութիւններ, որքան բնակիչ ունի և սա ինչպէս է աճում և վերջապէս ինչ դաւանանքի է: Այս բոլորը շատ մեծ ազդեցութիւն ունի գիւղի վրայ, ինչ որ միանգամայն ապացուցանելն աւելորդ է:

Երբ արդէն շնորհիւ ծրագրի առաջին մասի քիչ թէ շատ պարզում է գիւղի պատկերը, այն ժամանակ կարելի է սկսել երկրորդ մասի հարցերին պատասխանել:

Ամբողջ երկրորդ մասը զբաղւում է գիւղացիների ընդհանուր տնտեսական դրութեամբ:

Մեր ճանապարհորդութիւնների ժամանակ մեզ շատ անգամ հարց են տուել նոյն իսկ ինտիլիգենտ մարդիկ, թէ արդեօք ինչ կարիք կայ օր. գորգագործութիւն կամ մի ուրիշ արհեստ ուսումնասիրելիս՝ կատարել մանրամասն տնտեսական ուսումնասիրութիւններ: Այդ բանը զրանց կարծիքով աւելորդ ժամանակ է խլում և ծանրացնում է գործը: Ի հարկէ զրանք չարաչար սխալում են: Կարելի է արդեօք մի արհեստի օգտակարութեան մասին խօսել այս կամ այն գիւղի վերաբերմամբ, առանց իմանալու, թէ այդ արհեստը նրա տնտեսական կեանքի մէջ ինչ դեր է կատարում և ինչ հանգամանքներ են նպաստել նրա զարգացմանը այդ գիւղում, մինչդեռ այդ միևնոյն արհեստը ուրիշ գիւղում չի զարգանում: Եւ կամ ինչո՞ւ մի արհեստ մի գիւղում իբրև օգտակար ձեռնարկութիւն է հանդիսանում, այն ինչ միևնոյն արհեստը ուրիշ գիւղում չի լուծել, միմիայն գիւղի տնտեսական դրութիւնն ուսումնասիրելով: Այդ հանելուկը աւելի լաւ կը լուծուի, եթէ այդ գիւղում կազմուին գիւղական մի քանի ընտանիքների մանրամասն նախահաշիւներ. այդ ղէպքում կատարուի մի ամբողջ պատկեր, որը մեզ ցոյց կը տայ, թէ գիւղացու եկամուտի մէջ ինչ դեր է խաղում մեր ուսումնասիրելիք արհեստը:

Բայց մենք ուսումնասիրելով գիւղացու տնտեսական դրութիւնը՝ չպէտք է մոռանանք, որ կայ և մի ուրիշ գործօն, որ ոչ պակաս դեր է խաղում ընդհանրապէս հասարակութեան և մասնաւորապէս գիւղացու կեանքի մէջ: Դա նրա քաղաքակրթական աստիճանն է: Այդ հարցով էլ զբաղւում է ծրագրի երրորդ մասը: Այդ մասում մեր առաջ պէտք է պատկերանայ գիւղացին իւր բոլոր վատ և լաւ յատկութիւններով, իւր մտաւոր և բարոյական զարգացման աստիճաններով, եւ մի՞թէ կարող է որ և է արհեստ զարգանալ և յառաջադիմել այնտեղ, ուր ժողովուրդը քաղաքակրթական ամենացածր աստիճանի վրայ է կանգնած, ուր նա լճացած է և ուր տիրում է մտաւոր ամայութիւն: Եւ կարելի է արդեօք գիւղի յառաջադիմութեան մասին գաղափար կազմել, եթէ մենք չենք իմանում թէ նա իրեն համար ինչ սերունդ է պատրաստում:

Վերոյիշեալ երեք կէտերի վրայ հիմնուած գիւղի ամբողջ պատկերը նկարագրելուց յետոյ մենք միայն կարող ենք ձեռնարկել մեր ծրագրի չորրորդ կէտին—այն է արհեստի ուսումնա-

սիրութեան, որը պէտք է մեզ պարզ ցոյց տայ թէ ինչ գրութեան մէջ է արհեստը, ինչով կարելի է օգնել նրան և արդեօք նա գոյութեան իրաւունք և ապագայ ունի թէ ոչ:

I ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿՈՒԹԻՒՆԸ

1. Գիւղի անունը գրելիս պէտք է անպատճառ բացի տեղական անունից և գրել պաշտօնական անունը, հակառակ դէպքում հաւաքուած հում նիւթը մշակելիս՝ պաշտօնական ոչ մի հրատարակութիւնից չի կարելի օգտուել և նրանց հետ համեմատել:

2. Գիւղերում եղողը և քիչ թէ չատ գիւղական կեանքի հետ ծանօթ մարդը կ'իմանայ, թէ ինչ նշանակութիւն ունի գիւղացու համար նահանգական, գաւառական և այլ քաղաքների հեռաւորութիւնը: Մի կողմ դնելով քաղաքի տնտեսական, քաղաքակրթական և բարոյական ազդեցութեան մասին խօսելը, մենք ի նկատի ունենք այն, թէ գիւղացուն որչափ թանգ արժէ թէ ամառ և թէ ձմեռ ժամանակ գնալ վարչական և դատաստանական կետրոնները, զոհելով դրա համար ահագին ժամանակ: Տարածութիւնները և առհասարակ ամեն մի չափ գրելիս կարելի է գրել գիւղացու գործածած չափերով, միայն ծանօթութեան մէջ յիշել թէ այդ չափերը ինչի են հաւասար. բացի դրանից նշանակելով գիւղի և քաղաքի մէջ եղած տարածութիւնը՝ յիշել թէ որի հաշուին է, գիւղացոյց թէ կառավարութեան:

3. Տեղագրութիւնն ու կլիմայական պայմանները նկարագրելիս բաւական է խօսել գիւղի գրութեան, շրջակայքի՝ (համառօտ) կլիմայի, ջրի որպիսութեան և տեղական բնակիչների վրայ ունեցած ազդեցութեան մասին:

Իսկ աւելի մանրամասն կանգ առնելն այդ կէտի վրայ շատ հեռու կը տանի, նպատակից դուրս է և ոչ—մասնագէտի ուժերից վեր:

4—8. Ամենամեծ ուշադրութիւնը պէտք է դարձնել բնակիչների թուի, հասակների բաժանման, մեռածների ու ծնածների վրայ և դա ամենադժուար մասն է: Կան զանազան աղբիւրների, որոնցից կարելի է քաղել այդ տեղեկութիւնները 1) կոնսիստօրիայի հաշիւները, որոնք տրուում են իւրաքանչիւր տարի կառավարութեան 2) 1886 թ. ծխագրութիւնը 3) 1897 թ. ժողովրդագրութիւնը 4) քահանաների և մօլլաների մատեանները 5) եթէ ուսումնասիրողը լաւ ծանօթ է գիւղի հետ կամ ունի գիւղում վստահելի անձնաւորութիւններ կարող է ուղղակի հաշուել ծխերի,

տղամարդկանց, կանանց, մեռածների, ծնածների, պսակողների թիւը, և եթէ կարելի է, ըստ հասակի բաժանել: Դա ամենապարզ բայց ամենադժուար և ամենալաւ ձևն է: Շատ քչերին գուցէ յաջողուի այդ կատարել, մանաւանդ մեծ գիւղերում: Դրա համար պէտք է օգտուել քահանայի, կոնսիստօրիայի և 1897 թ. ժողովրդագրութեան թուերից: Իսկ ինչ վերաբերում է հասակների բաժանման, այդտեղ նախ և առաջ պէտք է որոշել աշխատաւորի, ժանման, այդտեղ նախ և առաջ պէտք է որոշել աշխատաւորի կիսաշխատաւորի և ոչ-աշխատաւորի տարիքները: Այդ անելիս պէտք է լաւ դիտել և տեղացիներից հարցնել, թէ նրանք որ տարիքից մինչև որ տարիքն են սկսում հաշուել այս ինչ կամ այն ինչ հասակը: Ընդունուած է առհասարակ կովկասում տղամարդկանց համար, Ա.—աշխատաւոր հասակում հաշուել 16—55, 60 տարիքը. Բ. կիսաշխատաւոր—8, 10—16 տար. և 55—70 տար. Գ. ոչ-աշխատաւոր—1—8, տար. և 70—100 տար.: Հասակների բաժանելու համար կայ մի ուրիշ ձև, որ աւելի հեշտ է և իրագործելի. իւրաքանչիւր գիւղում ընտրել 10—20 ընտանիք և ցուցակագրել իւրաքանչիւրի անունը, սեռը և տարիքը: Կատարելով այդ նոյն ձևով 10—20 գիւղերում, մենք կունենանք 100—200 ընտանիքի ցուցակ, որի հիման վրայ կարող ենք տոկոսներ ըստանալ, ի հարկէ դա կը լինի ոչ թէ բացարձակ ճշմարտութիւն այլ մօտաւոր, բայց դարձեալ գերադասելի է քահանաների ու մօլլաների մատեաններից սկսալ տեղեկութիւն հաւաքելուց:

II ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ

9—13. Շատ զգուշութեամբ պէտք է մօտենալ այս հարցին և վերին ստիճանի քննադատաբար վերաբերուել: Հողը գիւղացու կեանքն է: Նա սերունդներ է կերակրել և կերակրելու է և դրա համար երբ հողի մասին հարց էք տալիս, գիւղացու սիրտը դողում է. դա շատ պարզ է: Մինչև անգամ երգումը իր նշանակութիւնը կորցնում է գիւղացու աչքում, երբ նա հողի մասին տեղեկութիւն է տալիս կառավարութեան: Նա ցոյց կ'տայ իւր հողը այնպէս, ինչպէս իւր շահն է պահանջում, ի հարկէ իւր խելքով և այդ բանը իրենք գիւղացիք են խոստովանում: Կովկասում հողային հարցը շատ կիճոտած է: Մեզանում այնպէս չէ, ինչպէս Ռուսաստանում, որտեղ ամեն մի հողի կտոր չափուած է և ունի իւր յատակագիրը: Մեզ մօտ այդ դեռ նոր են սկսում կատարել: Դրա համար առ այժմ պէտք է օգտուել այն թուերից, ինչ որ գիւղացիք են ցոյց տուել կառավարութեան վերջին անգամ և բա-

ցի գրանից համեմատել այդ թուերը կովկասեան վիճակագրական կոմիտէի հրատարակած ժողովածուի, հարկային տեսուչների և ակցիզի վարչութեան (այգիների մասին) մօտ եղած թուերի հետ:

Եթէ հնարաւոր է ամենալաւն է մի կերպ գիւղացիներէց իմանալ հողի իսկական քանակութիւնը, համոզելով նրանց, թէ դրանից ոչ մի վնաս չկայ: Այստեղ նոյնպէս օգտաւէտ է գործ դնել այն միջոցը, որը առաջարկեցինք հասակների որոշման համար, այսինքն ընտրել զանազան կարողութեան տէր 10—20 ընտանիք և նրանց հողերի և անասունների քանակութիւնը գրել, սրանց վրայ հիմնուելով միջինը ստանալ և համեմատել միւս թուերից ստացած միջին թուերի հետ:

Պէտք է աշխատել հողերի քանակութիւնները, տուած եկամուտները ստանալ գիւղացիներից իրենց չափերով, իսկ յետոյ վերածել պետական չափերի. իսկ հողի եկամուտն անպատճառ ստուգել կողմնակի աղբիւրներով էլ, օր. կալուածատիրոջից, ուսուցչից և այլն:

14. Անամապահութեան մասին կարելի է տեղեկութիւններ ստանալ 1) Տեղական անամապահութեան վերջնելով նրանց մատենները, որ լաւ և մանրամասն է կազմուած. 2) Գիւղացիք իրենք կարող են տալ կամ ուղղակի կարելի է դիմել հովիւներին, 3) Տանուտիրոջ մօտ պէտք է լինի անասունների ցուցակը և իւրաքանչիւր տուն ունի իւր գիրքը, որի մէջ նշանակուած է նրա անասունների թիւը:

15. Թռչունների մասին տեղեկութիւն տալ կարող են միայն գիւղացիք, այն էլ մօտաւորապէս:

17. Գիւղի հասարակութիւնը ըստ կարողութեան բաժանելու համար պէտք է, 1) Գիւղացիների կարծիքը հարցնել, եթէ ուսումնասիրողը լաւ ծանօթ չէ գիւղացոց հետ:

2) Կարելի է օգտուել հողի և անասունի ցուցակներից, որտեղ տարածուած է երկրագործութիւնը, այնտեղ պէտք է գերազասել հողի քանակութիւնը. իսկ որտեղ անամապահութիւնը, այնտեղ անասունների թիւը և նրանց վրայ հիմնել: Բացի դրանից հարկաւոր է նոյնպէս գիւղացու ընդհանուր շարժական և անշարժ կայքը ի նկատի ունենալ: Նոյն սկզբունքով պէտք է ղեկավարուել գիւղական ընտանիքներ ընտրելիս նախահաշիւներ կազմելու համար:

III ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

29. Այս կէտք, այսինքն տեղացիների բնաւորութեան բընորոշ գծերը նկարագրելը, երկար ժամանակեայ գիտողութիւն է պահանջում: Դրա համար անհրաժեշտ է, որ ուսումնասիրողը բացի իւր կարծիքից՝ դիմէ և տեղական ինտիլիգենտներին, ուսուցիչներին, պաշտօնեաներին և այլն:

IV ԱՐՋԵՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

32—40. Այս կէտերի պատասխանը պէտք է ստանալ միմիայն արհեստաւորներից և փորձուած գիւղացիներից: Իսկ եթէ հարցը կանանց արհեստին է վերաբերում, պէտք է ամեն կերպ աշխատել նրանցից տեղեկութիւններ հաւաքել: Նրանք լաւ գիտեն, աւելի ճիշտ են ասում և եթէ խաբեն էլ, աւելի շուտով կը բռնուին քան տղամարդիկ: Ինչ վերաբերում է այն բանին, թէ քանի՞ ընտանիք է պարապում արհեստով, կամ քանի՞ ընտանիք հում նիւթից և գործիքներից գուրկ լինելու պատճառով չէ պարապում—գրան կարող են գիւղացիք շատ լաւ պատասխանել—հաշուելով մէկիկ մէկիկ իւրաքանչիւր ծուխ, օր. եթէ հարցը վերաբերում է գորգագործութեան, նրանք կարող են հաշուել, թէ ով ճախարակ և ոստան ունի և ով չունի:

14. է.—մշտապէս ասելով պէտք է հասկանալ ոչ թէ ամբողջ տարին, այլ այն ժամանակամիջոցը, որի ընթացքում սովորութիւն կայ պարապելու այդ արհեստով. օր. եթէ ընտանիքը ամեն տարի մի գորգի կամ կարպետի համար բուրդ ունի, թէկուզ պարտքով լինի, նրան պէտք հաշուել մշտական հում նիւթ ունեցող: Կիսապահոված պէտք հաշուել նրանց, որոնք երկու կամ երեք տարին մի անգամ են գործում մի գորգ կամ մի կապերտ: Այստեղ անհրաժեշտ է գիւղացիների հայեացքը դրա մասին:

42. Գործի ո՞ր մասն է յանձնուում առհասարակ աշխատաւորներին և ո՞րը կիսաաշխատաւորներին:

Ը.—կան արհեստներ, որոնք մի քանի մարդոց մասնակցութիւնն են պահանջում, օր. գորգ գործելիս գրել թէ երկու կամ երեք կին ո՞րքան են գործում սովորաբար տարուայ ընթացքում

և դա աւելի կարևոր է, քան այն հարցը թէ որքան կարող են գործել:

43. ա.—Այս հարցի պատասխանը կարելի է ստանալ գիւղացիներից, մեծ քանակութեամբ գնողներից և վաճառականներից. կարելի է խմանալ և շուկաներում: Նոյնը կարելի է ասել և գների վերաբերմամբ, միայն պէտք է զանազանել հրապարակի գինը այն գնից, որով սնայնագործը գնահատում է իւր այս ինչ կամ այն ինչ կտոր ապրանքը. օր. մի կին գործում է իւր աղջկայ համար իբր բաժինք մի գորգ, որը գնահատում է 40 ր. և եթէ աւելի էլ տան, գուցէ չը ծախէ, այն ինչ հրապարակում նա արժէ 25—30 ր. այդ դէպքում պէտք է երկու գներն էլ առանձին առանձին գրել, չը շփոթել միմեանց հետ. այդ տեսակ դէպքեր լինում են, ի հարկէ աւելի ապահովուած ընտանիքներում:

գ.—Պէտք է խմանալ—որտեղ աւելի լաւ գնով և ձեռնտու պայմանով են ծախում—գիւղում թէ բազար տանելիս. ինչ տարբերութիւն է լինում գների մէջ այդ դէպքում, և որ ձեւը աւելի ցանկալի և տարածուած է:

44. ա. Այս կէտում, եթէ կարելի է, մանրամասն կերպով հաշուել թէ որոշ քանակութեամբ և որոշ մեծութեամբ իրեղէններ արտադրելու համար ինչ գումար է հարկաւոր. օր. մի գորգ գործելու համար 4x2 մեծութեան որչափ բուրդի և ներկի փող է հարկաւոր. բացի գրանից՝ դէպքեր են լինում, որ փողով աշխատող են վարձում, ահա այդ ընդհանուր գումարը գրել:

բ. գ. Շատ կարևոր է և հետաքրքրական խմանալ թէ անհասարակ գիւղացիք որտեղից և ումից են սովորում փող վերցնում. արդեօք ինչ տոկոս և գրաւական են տալիս և ինչ ժամանակով: Հարկաւոր է նաև պարզել այն, թէ վերցրած փողից որ մասը գործադրում է հում նիւթ գնելու և այդ փողը որչափ ժամանակում կատարում է իւր շրջանը, որը պէտք է հաշուել այն օրից, երբ սկսում են մշակել հում նիւթը, մինչև վերջացնել—ծախելը:

45. Աշխատաւորների մասին խօսելիս՝ չպէտք նրանց շփոթել այն անհատների հետ, որոնք փոխադարձաբար գնում են միմեանց օգնելու: Սրանց կարելի է առանձին նշանակել: Վարձի պայմանները պէտք է լաւ տեղեկանալով գրել. շատ անգամ պատահում է, որ փոխանակ փող տալու, տալիս են ցորեն, ալիւր, հաց, չիթ կամ մի ուրիշ բան, մանաւանդ այդ շատ անգամ լինում է հարուստ և աղքատ քոյրերի և անհասարակ ազգակից ընտանիքների մէջ:

47. գ. Պէտք է գիւղացիներից տեղեկանալ, թէ նրանք ինչ կարծիքի են արդիւնաբերող ընկերութիւնների կամ ուղղակի ար-

տելի (артель) մասին, և եթէ նրանք անտարբեր են դէպի այդպիսի կազմակերպութիւնները պատճառն ինչ է: Այստեղ պէտք է խմանալ, թէ գոյութիւն ունեն նրանց մէջ նահապետական համարադիւնաբերութեան ձևերը. ինչպէս օրինակ իւր և պանիր շինելիս, բուրդ գգելիս և այլն: Եթէ կան գիւղում սպառող ընկերութիւններ, յիշել հարկաւոր է:


Վերջացնելով համառօտ կերպով ծրագրի կէտերի բացատրութիւնը՝ այժմ խօսենք այն գործնական միջոցների մասին, որոնցով կարելի է օգտուել ուսումնասիրութեան ժամանակ: Սկզբից, եթէ ուսումնասիրողը տեղացի չէ, պատահում են շատ գլխաւորութիւններ: Գիւղացիներն միանգամից այդքան հարցեր լսելով՝ կ'սկսեն կասկածել թէ երևի մի փորձանք է պատրաստում իրենց համար և ամենայն կերպ կաշխատեն խուսափողական պատասխաններ տալ և նոյն իսկ խարել, մանաւանդ եթէ ուսումնասիրողը կառավարութեան կողմից է նշանակուած. այդպիսով ըստացում է մի անպէտք նիւթ, որից չի կարելի օգտուել: Բայց չպէտք է յուսահատուել, ամեն կերպ հարկաւոր է գիւղացիներին գրաւել, բացատրել նրանց գործի էութիւնը, շօշափելի փաստերով հասկացնել նրանց, որ այդ բոլորը իրենց համար է, ցոյց տալով զանազան կատարելագործուած գործիքներ մշակութեան ձևեր և այլն:


Աւելի լաւ է գիւղ մտնելիս իսկոյն չսկսել գործը, մի քիչ ընտելանալ, մօտիկ ծանօթանալ գիւղական ինտելիգենցիայի հետ և ապա գգուելութեամբ սկսել և աշխատել, որչափ կարելի է, քիչ գրել գիւղացոց առաջ, այլ բերանացի հարց ու փորձ անել ու յետոյ առանձնանալ ու գրել. որովհետև գրելը գիւղացու կարծիքով մեծ բան է, նրանից կարող է և շատ լաւ բան գուրս գալ ու շատ վատ:

Ուսումնասիրողի փորձառութիւնից կախուած է խմանալ գիւղացու ասածի սուտ կամ ճիշտ լինելը, դրա համար կան միջոցներ անգամ ստուգիչ հարցեր, որոնք միջոց են տալիս շատ անգամ գիւղացու սուտը բռնելու: Այսպէս օր. Լ. Հողից ստացուած եկամուտը կամ նոյն իսկ հողի քանակութիւնը միշտ կարելի է ուղղակի կամ կողմնակի ազդեցիկներից ստուգել կալուածատիրոջ տուած տասանորդներից կամ գնած ու ծախած ցորենի, գարիի քանակութիւնից և այլն:

Վերջացնելով մեր նկատողութիւնները, անհրաժեշտ ենք գտնում խօսել, թէ ինչպէս պէտք է վերաբերուի ուսումնասիրողը դէպի գործը: Բարեխղճութեան մասին էլ չենք խօսում, որովհետև տեղա հասկանալի է. բայց ուսումնասիրողը քննադատաբար վերաբերուելով հանդերձ՝ միշտ պարտաւոր է գործին օրեկտիվ վե-

րաբերուել և իւր անհատական կարծիքը առաջ բերել միայն այն դէպքում, երբ ծրագրի կէտերն են այդ պահանջում. օրինակ երբ խօսք է լինում ազգաբնակչութեան քաղաքակրթութեան աստիճանի, նրա խարակտերիստիկայի մասին կամ գործիքների, աշխատելու եղանակի մասին: Իհարկէ ուսումնասիրողը կարող է իւր կարծիքը բոլոր միւս կէտերումն էլ բերել, միայն թէ իւրաքանչիւր այդպիսի դէպքում նա պարտաւոր է այդ առանձնապէս յիշել:





21.008